ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ԵՊՀ կարիքների համար Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 «28» փետրվարի 2024 թ.,
ժամը 10:30

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ ՝
Ն. Ավթանդիլյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
հանձնաժողովի անդամներ ՝
Լ. Վանյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Է. Նադիրյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
հանձնաժողովի քարտուղար ՝
Ա. Աղուզումցյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) ընտրված մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ, Գոհար Ալեքսանյան Մուշեղի ԱՁ, «Պրիմա Լաբ» ՍՊԸ, Վաչե Նալբանդյան Վրեժի Ա/Ձ մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ Профлаб ООО մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում են ստորագրությունը և կնիքը: Օրենքով սահմանված ժամկետում ООО Профлаб մասնակիցը Համակարգին չի կցել ստորագրված և կնքված դիմում-հայտարարությունը, բացակայում է Հավելված 1.2-ը (ձև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը), նաև չի կատարել շտկումներ տեխնիկական բնութագրերում:

Ընդունվել է որոշում. կողմ՝3, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին

Գնահատման ընթացքում արձանագրվել է, որ Профлаб ООО մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում են ստորագրությունը և կնիքը: Հանձնաժողովը որոշեց մասնակցին տալ օրենքով սահմանված ժամկետում անհամապատասխանությունների շտկման հնարավորություն:

Նաև արձանագրվել էր, որ Профлаб ООО մասնակցի կողմից ներկայացված փաթեթի 24-26 չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա են որոշակի թերություններ՝ 1) մասնավորապես նշված չի կոնկրետ կազմակերպության անվանումը (որի արտադրանքը նախատեսվում է մատակարարել հաղթող ընկերության կողմից), դրանց համապատասխան տեխնիկական բնութագրերն ու պարամետրերը, այն դեպքում երբ պատվիրատուն իր ներկայացրած տեխնիկական բնութագրում նշել էր 4 ընկերություն՝ Bio Rad, Thermo Fisher Scientific, Biosan, Agilent: Որ ընկերության սարքավորումն է նախատեսվում մատակարարել: 2) Հաղթող կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը ոչնչով չեն տարբերվում պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերից, ամբողջությամբ իդենտիկ են և հստակեցված չեն փոփոխական արժեքները: Խնդրում ենք նշել թե կոնկրետ որ ընկերության (ընկերությունների) արտադրանքն է նախատեսվում ներկրել Հայաստանի Հանրապետություն, ներկայացնել նաև սարքավորումների տեխնիկական բնութագրերը հստակ և մանրամասն:

Վերը նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում պատվիրատուի կողմից հստակ նշված է, որ հաղթող կազմակերպությունը՝ մատակարարը պետք է իրականացնի սարքավորման (սարքավորումների) տեղափոխում, տեղադրում և անձնակազմի ուսուցում: Ելնելով նշվածից՝ խնդրում ենք ներկայացնել թե հաղթող կազմակերպությունը ինչ եղանակով է իրականացնելու տվյալ գործողությունները, արդյոք ՀՀ-ում առկա է տվյալ կազմակերպության մասնաճյուղ կամ ներկայացուցչական

մարմին: Նաև երաշխիք պահանջվող սարքերի համար ինչպես է նախատեսվում սպասարկումը և երաշխիքը 1 տարվա ընթացքում:

Հաշվի առնելով որ 24 և 25 չափաբաժինները իրենցից ներկայացնում են ամբողջական համակարգեր (սարքավորումը, բաղկացուցիչ մասերի հետ միասին), խնդրում ենք ներկայացնել համալիրի մեջ մտնող առանձին մասերի մոդելերը, կատալոգ համարները, ինչպես նաև արտադրողի լիազորագիրը՝ վերջնական օգտագործողի և մրցույթի համարի նշումով:

Հաշվի առնելով չափաբաժին 17-ի տեխնիկական բնութագիրը՝ մատակարարի կողմից ներկայացված չի սարքավորման անվանումը, կազմակերպությունը կամ մոդելը, ուստի խնդրում ենք տրամադրել մանրամասն տեղեկատվություն կազմակերպության, սարքավորման մոդելի և տեխնիկական բնութագրի վերաբերյալ:

Օրենքով սահմանված ժամկետում Профлаб ООО մասնակիցը Համակարգին չի կցել ստորագրված և կնքված դիմում-հայտարարությունը, նաև չի կատարել շտկումներ տեխնիկական բնութագրերում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին

3.1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած 12, 17, 24-26-րդ չափաբաժինների մասով, պայմանագիր չի կնքվել հիմնավորմամբ:

3.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գ) պարբերությունը և սույն արձանագրության ООО Профлаб-ի տվյալները ներկայացնել լիազոր մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Ն. Ավթանդիլյան _____ ստորագրություն

Անդամներ՝ Լ. Վանյան _____ ստորագրություն

Է. Նադիրյան _____ ստորագրություն

Քարտուղար՝ Ա. Աղուզումցյան _____ ստորագրություն